ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» ապրիլի 2013թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Երևան քաղաքում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրի մասին» հ.271-Ա, Երևանի քաղաքապետի 04.04.2012թ. հ.3026-Ա և 02.05.2012թ. հ.3636-Ա որոշումները, Աշոտ Բաղդասարյանի համաձայնությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Աշոտ Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 23.08.2004թ. հ.1819106 վկայական) տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող Երևանի Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի հ.11 հասցեում գտնվող 14100.0քմ մակերեսով հողամասից 1933.49քմ մակերեսով հողամասը կից գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 1933.49քմ /727.07քմ+1206.42քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Աշոտ Բաղդասարյանին Երևանի Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի հ.11 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 14100.0քմ մակերեսով հողամասից 1933.49քմ մակերեսով հողամասը փոխանակել կից գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 1933.49քմ /727.07քմ+1206.42քմ/ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Ա.Բաղդասարյանին Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի հ.11 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 14100.0քմ մակերեսով հողամասից 1933.49քմ մակերեսով հատվածը գտնվում է կառուցվող ավտոճանապարհին անմիջապես կից հարևանությամբ և հողամասերի փոխանակման արդյունքում հնարավորություն է ստեղծվում ավտոճանապարհի շինարարական աշխատանքների ավարտից հետո ունենալ քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված և միաժամանակ լուծվում է նաև հարևանությամբ գտնվող հողամասերի ուրվագծերի և դիրքի կարգավորման հարցը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և նախատեսվող ավտոճանապարհի կառուցման անհրաժեշտությունը, հողամասի սեփականատիրոջ հետ տեղի ունեցած բազմաթիվ բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որպես նշված հողամասի փոխանակում առաջարկվում է Երևանի Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի հ.11 հասցեում գտնվող Աշոտ Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 14100.0քմ մակերեսով հողամասից 1933.49քմ մակերեսով հողամասը փոխանակել կից գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 1933.49քմ /727.07քմ+1206.42քմ/ մակերեսով համարժեք հողամասի:

Փոխանակման համար քննարկվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 6-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Երևան քաղաքում ավտոմայրուղու կառուցման ներդրումային ծրագրի մասին» հ.271-Ա որոշման կատարումն ապահովելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ